ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«18» 05 2017թ. N ՍՍ/6114-17

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար տասնյոթ թվականի մայիսի տասնութին
18.05.2017թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13) ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.12.2007թ. N 1531-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 41-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝ լիազորում է Ծառայության աշխատակազմի Ջերմուկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արմեն Դանիելյանին (անձնագիր՝ AM 0455742, տրված է 26.09.2011թ. 035-ի կողմից) Հայաստանի Հանրապետության անունից լուծել 2014 թվականի փետրվարի 13-ին Վայք /Ջերմուկ/ նոտարական տարածքի նոտար Ստեփան Ստեփանյանի կողմից վավերացված և N 24 սեղանամատյանում գրանցված «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագիրը Ջերմուկի քաղաքապետարանի հետ կնքել «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագիր, հանդես գալ համապատասխան նոտարական գրասենյակում և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Մ.ՄԻՆԱՍՅԱՆ

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 10) 52 45 74, ֆաքս՝ (374 10) 52 15 94
info@sif.am , www.ssss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2017 թ. N 155-Ա

ՀՀ ԱԱՀՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 24-րդ կետին համապատասխան **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկի Ձախափնյակի 2-րդ փողոցի N 3 շենքի 1-ին հարկում գտնվող 35 (երեսունհինգ) քմ մակերեսով տարածքը վարձակալությամբ տրամադրել ՀՀ ԱԱՀՆ Զբաղվածության պետական գործակալության Ջերմուկի զբաղվածության տարածքային կենտրոնին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի ժամանակավոր տիրապետման և օգտագործման համար ամսական վարձավճար սահմանել 4200 (չորս հազար երկու հարյուր) դրամ:
3. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկի Ձախափնյակի 2-րդ փողոցի N 3 շենքի 1-ին հարկում գտնվող 70,8 (յոթանասուն ամբողջ ութ տասնորդական) քմ մակերեսով տարածքը վարձակալությամբ տրամադրել ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության ծառայության Ջերմուկի սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժնին:
4. Սույն որոշման 2-րդ կետում նշված տարածքի ժամանակավոր տիրապետման և օգտագործման համար ամսական վարձավճար սահմանել 20 000 (քսան հազար) դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2017 հունիսի 8
Ջերմուկ

1-ին ՅԱՐԿԱՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ

Մ 1:200

Ф = 0.3 ; d = 0.1 ; h = 2.9 ; H = 3.1



ՀԵՆԱՊՈՀԱԿԱՅՈՒ — 48,35 ^{2}

ՍՏ. ԾԱԼԱՅՈՒԹՅՈՒՆ — 39,75 ^{2}

ԸՄՊԵՂԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՆՑՄՈՒ — 33,55 ^{2}

ընդհանուր օգտագործման տարածք — 22,55 ^{2}

ՀԱՏԱԿԱՊԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ՀՈՒՆ 1042191